ՕԺՏՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքելյան Մ. Ա. (ԵՊՀ, Երևան, ՀՀ)

arakelyanmadlena@gmail.com

Գրիգորյան Վ. Հ. (ԵՊՀ, Երևան, ՀՀ)

vilena.grigoryan@ysu.am

Օժտվածության վերաբերյալ հետազոտությունները բուռն ընթացք են ստացել նախորդ դարի վերջին՝ բնորոշելով օժտվածությունը առավելապես կոգնիտիվ գործընթացների, ինտելեկտուալ կարողությունների բարձր մակարդակ: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել օժտված պատանիների անձնային առանձնահատկությունները, արտահայտված անձնային գծերը: Հետազոտությանը մասնակցել են ավելի քան 500 պատանիներ, որոնցից օժտված են դուրս բերվել 35-ը: Վերջիններիս հետ իրականացված հետագա ուսումնասիրությունները փաստում են օժտված պատանիների՝ աղջիկների և տղաների անձնային որակների տարբերակվածության, հուզական ոլորտի կարգավորման դժվարությունների մասին:

Հանգուցային բառեր՝ *Օժտվածություն, անձնային գծեր, դիսպոզիցիոնալ (գործոնային) մոտեցում, հուզական անկայունություն:*

Օժտվածության վերաբերյալ մոտեցումների պատմական ընթացքն ուսումնասիրելիս առանձնացնում ենք հատկապես XX-րդ դարի առաջին ու հատկապես երկրորդ կեսերը, որպես գիտական հետազոտությունների մեկնարկի ու գիտելիքի խորացման շրջան, որը պայմանավորված էր հոգեբանության զարգացմամբ, ինչպես նաև բազմազան ուսումնասիրության մեթոդների կիրառման հնարավորությամբ: Տաղանդը, ընդունակությունները հիմնականում ասոցացվում էր շատ բարձր ինտելեկտի հետ, ինչպես նաև դիտարկվում ձեռքբերումների տեսանկյունից: Օժտված երեխաների, պատանիների անձնային գծերի, որակների ուսումնասիրությունները՝ ի տարբերություն ինտելեկտուալ մակարդակի, կրեատիվության, կոգնիտիվ ոճերի ուղղությամբ հետազոտությունների, բավականին քիչ են, ինչն անհրաժեշտություն է առաջացնում ակտիվ ուսումնասիրությունների և առանձնահատկությունների վերհանման: Ըստ մի շարք հետազոտությունների՝ այսպիսի անհատները ակտիվ են, համառ, էներգիայի բարձր մակարդակով, բաց են նոր փորձի նկատմամբ, հետաքրքրասեր, եսակենտրոն, զգայուն և այլն [1]: Անձնային գծերի, բնավորության ուղղությամբ ուսումնասիրությունները շատ կարևոր են օժտված անհատներին աջակցելու, հատկապես կրթության կազմակերպման, հոգեբանական միջամտություն իրականացնելու համար: Սույն աշխատանքի

նպատակն է օժտված պատանիների անձնային որակների, գծերի ուսումնասիրությունը, նրանց բնորոշ առանձնահատկությունների դուրսբերումը: Մենք ենթադրում ենք, որ օժտված պատանիները տարբերվում են իրենց հույզերի կառավարման կարողություններով, ակտիվությամբ, հոգեկանի ուղղվածությամբ, այսինքն, օժտվածությունը ենթադրում է որոշակի անձնային տարբերություններ և առանձնահատկություններ:

Մեթոդ և մեթոդիկաներ

Հետազոտությունը անց է կացվել Երևանի մի շարք դպրոցներում, որոնցից են՝ «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթահամալիրը, «Քվանտ» վարժարանը, Կարեն Դեմիրճյանի անվան √ 139 ավագ դպրոցը, Բենիամին Ժամկոչյանի անվան √ 119 ավագ դպրոցը: Դպրոցներից երկուսը՝ «Շիրակացու ճեմարան» գիտակրթահամալիրը և «Քվանտ» վարժարանը, ընտրվել են որպես բարձր ինտելեկտուալ ընդունակություններ ունեցող երեխաների կրթօջախներ: Հետազոտվել են ավագ դպրոցի ավելի քան 500 դպրոցականներ, տարիքային խումբը՝ 16-18, տարիքային դասակարգումն ըստ Գ. Կրայգի, որի համաձայն 12-19 տարեկանը համարվում է դեռահասության և վերին շեմը՝ պատանեկության տարիք [3]:

Հետազոտությունը իրականացրել ենք երկու փուլով: Առաջին փուլը հոգեդիագնոստիկ գործընթացն է, որն ուղղված է դուրս բերելու օժտված պատանիներին: Կիրառել ենք Ջ. Ռենզուլիի եռամոդել հոգեդիագնոստիկ համակարգը, ըստ որի օժտվածությունը իրենից ներկայացնում է երեք կարևոր բաղադրիչների միասնություն, որոնք են՝ ինտելեկտուալ ընդունակություններ, կրեատիվություն (ստեղծարարություն) և ուսումնական մոտիվացիա [1]: Ըստ այս մոդելի՝ օժտված են համարվում այն պատանիները, որոնք թվարկված բոլոր երեք բաղադրիչներից կգրանցեն առավելագույն արդյունքներ: Ինտելեկտուալ ընդունակությունների հոգեդիագնոստիկայի համար կիրառել ենք Կետտելի «Մշակույթից անկախ» ինտելեկտի թեստը, կրեատիվությունը որոշելու համար՝ Պոլ Թորենսի ստեղծագործական մտածողության գնահատման մեթոդիկան՝ «Ավարտիր նկարը» ենթաթեստը և մոտիվացիայի մակարդակը որոշելու համար՝ Մ. Ի. Լուկյանովայի, Ն. Վ Կալինինայի ուսումնական մոտիվացիայի ուսումնասիրման մեթոդիկան [2,4,5]: Երկրորդ փուլը բուն հետազոտությունն է, որը իրականացվել է հոգեդիագնոստիկայի ընթացքում դուրս բերված օժտված պատանիների հետ՝ ուսումնասիրելով նրանց անձի հոգեբանական բնութագրիչները:

Այսպիսով, բոլոր 500 հետազոտվողներից օժտված են դուրս բերվել միայն 35, որը կազմում է հետազոտվողների ընդհանուր քանակի 7%: Հետազոտությանը մասնակցել են փորձարարական խմբի 35 և ստուգիչ խմբի 35 պատանիներ, ընդհանուր քանակը՝ 70: 35 օժտված պատանիներից 14 եղել են իգական, 21 արական սեռի ներկայացուցիչներ: Ստուգիչ խմբի միջին ընդունակություններով պատանիներից 24 իգական, 11 արական սեռի ներկայա-

ցուցիչներ: Համեմատական վերլուծություն անցկացնելու համար օգտագործել ենք SPSS 22 վիճակագրական փաթեթը, T-Test մեթոդը երկու անկախ խմբերի վիճակագրական վերլուծության համար, P նշանակալիության արժեքը <.05:

Անձի հոգեբանական կերպարի դուրսբերման համար կիրառվել է «Մեծ հնգյակ (Big Five)» հարցարանը: Սա Կետտելի 16 գործոնային հարցարանի ձևափոխված տարբերակն է, ստեղծվել է Ռ. Մակկրաեի և Պ. Կոստայի կողմից: Այն ավելի կարճ է, անձնային կերպարը դուրս է բերվում առավել ընդհանրացված, ինչպես նաև մշակույթից կախվածությունը համեմատաբար փոքր է՝ ի տարբերություն մյուս թեստերի, քանի որ ընդգրկված են առավելապես կայուն անձնային գործոններ [6]: Հարցարանը կազմված է 75 ծայրահեղ երկբևեռներով ներկայացված դատողություններից, դուրս է բերում հինգ մեծ դիսպոզիցիաներ, որոնք իրենց հերթին կազմված են հինգ առաջնային բաղադրիչներից կամ գծերից: Հինգ մեծ դիսպոզիցիաներն ու դրանց բաղադրիչներն են՝

էքստրավերսիա - ինտրովերսիա՝ (ակտիվություն/պասիվություն, գերակայում/ենթարկվողականություն, շփվողականություն/ինքնամփոփություն, նոր տրպավորությունների որոնում/նոր տպավորություններից խուսափում),

կապվածություն – օտարվածություն/անկախություն՝ (ջերմություն/անտարբերություն, համագործակցություն/մրցակցություն, վստահություն/կասկածամտություն, հասկացում/չհասկացում, հարգանք դիմացինի հանդեպ/ինքնահարգանք),

վերահսկում - բնականություն՝ (կոկիկություն/թափթփվածություն, համառություն/թուլակամություն, պատասխանատվություն/անպատասխանատվություն, ինքնավերահսկում/իմպուլսիվություն, շրջահայացություն/անհոգություն),

հուզական անկայունություն - հուզական կայունություն՝ (տագնապայնություն/անհոգություն, լարվածություն/թուլացում, դեպրեսիվություն/հուզական հարմարավետություն, ինքնաքննադատություն/ինքնաբավություն, հուզական անկայունություն/հուզական կայունություն),

էքսպրեսիվություն-գործնականություն՝ (հետաքրքրասիրություն/պահպանողականություն, երազկոտություն/իրատեսականություն, արիտիստականություն/ոչ արտիստականություն, զգայունություն/ցածր զգայունություն, ճկունություն/ռիգիդություն) [6]:

Արդյունքներ և քննարկում

Աղյուսակ 1-ում ներկայացված են երկու անկախ՝ օժտված և միջին ընդունակություններով պատանիների՝ աղջիկների և տղաների, միջին արդյունքները, ստանդարտ շեղման, F/F Sig. և նշանակալիության ցուցանիշները՝ ըստ որի փորձարարական և ստուգիչ խմբերը տարբերվում են միմյանցից՝ ըստ ներքոնշյալ որակների:

Աղյուսակ 1. Փորձարարական և ստուգիչ խմբերի անձնային գծերի նշանակալի տարբերությունները

ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ	ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՍՏՈՒԳԻՉ ԽՄԲԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱ-ՆԻՇՆԵՐ	ՍՏԱՆԴԱՐՏ ՇԵՂՈՒՄ	F	SIG	< P
1.ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ	8.29	10.46	3.083/3.868	5.197	.026	.012
2. ՀԱՍԿԱՑՈՒՄ	7.51	9.80	2.801/2.699	.014	.906	.001
3. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ	48.94	53.26	5.906/7.567	2.771	.101	.010
4. ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ	8.11	10.06	2.928/3.421	.807	.372	.013
5. ՆԵՅՐՈՏԻԶՄ	60.40	52.71	10.683/7.379	9.175	.003	.001
6. ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ	12.03	9.71	3.222/2.444	6.327	.014	.001
7.ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ	12.14	9.57	3.782/3.301	3.026	.086	.003
8.ՀՈՒԶԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	13.14	11.14	2.591/2.499	.106	.746	.002
9. ԵՐԱԶԿՈՏՈՒԹՅՈՒՆ	11.51	12.83	2.393/2.256	1.212	.275	.021
10. ԶԳԱՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ	9.83	11.91	2.706/3.450	2.594	.112	.006

Ըստ ներկայացված աղյուսակի՝ օժտված և միջին ընդունակություններով պատանիները տարբերվում են հետևյալ անձնային գծերով: *Տպավորությունների որոնում*՝ փորձարարական խմբի 8.29 և ստուգիչ խմբի 10.46 միջին ցուցանիշներով, նշանակալի տարբերությունը՝ .012: *Հասկացում* անձնային գիծը համապատասխանաբար՝ 7.51/9.80, նշանակալի տարբերությունը՝ .001: *Վերահսկում* անձնային մեծ գործոն՝ 48.94/53.26, նշանակալի տարբերությունը՝ .010: *Ինքնավերահսկում* անձնային գիծ՝ 8.11/10.06, նշանակալի տարբերությունը՝ .013: *Նեյրոտիզմ* անձնային մեծ գործոն՝ 60.40/52.71, նշանակալի տարբերությունը՝ .001: *Տագնապայնություն* անձնային գիծ՝ 12.03/9.71, նշանակալի տարբերությունը՝ .001: *Ինքնաքննադատություն*՝ 12.14/9.57, նշանակալի տարբերությունը՝ .003: *Հուզական անկայունություն*՝ 13.14/11.14, նշանակալի տարբերությունը՝ .002: *Երազկոտություն*՝ 11.51/12.83, նշանակալի տարբերությունը՝ .021 և *զգայունակությունը*՝ 11.91/9.83, .006 նշանակալի տարբերությամբ:

Վերլուծելով ներկայացված տվյալները կարող ենք ասել, որ *էքստրավերսիա-ինտրովերսիա* բևեռականության մեջ նշանակալի տարբերություն կա միայն մեկ սանդղակով՝ միջին ընդունակություններով պատանիները ձգտում են նոր տպավորություններ ստանալու, ինչը էքստրավերտության դրսևորում է (հոգեկանի ուղղվածությունը դեպի դուրս, արտաքին աշխարհ) և տարբերում է նրանց օժտված պատանիներից: Հաջորդ անձնային մեծ գործոնն է՝

կապվածություն-օտարվածություն, որի էությունը մարդկանց հետ փոխհարաբերություններն են և որի մեջ ներառվում է այնպիսի անձնային գծեր, ինչպիսիք են՝ ընկերական տրամադրվածությունը, վստահությունը, համագործակցությունը և այլն [6]: Այս գործոնի նշանակալի տարբերվող բաղադրիչը հասկացումչհասկացում անձնային գիծն է: Ստուգիչ խմբի պատանիները շփման մեջ հասկանալու, դիմացինի վիճակի մեջ մտնելու դիրքորոշում ունեն, որը կապվածության գործոնի դրսևորում է, նույնը չենք կարող ասել օժտված պատանիների մասին: Օժտված պատանիները տարբերվում են ինչպես վերահսկում մեծ գործոնի, այնպես էլ դրա բաղադրիչ հանդիսացող ինքնավերահսկման ցուցանիշներով, ինչը նշանակում է, որ նրանց համեմատությամբ ստուգիչ խմբի պատանիները ավելի բարեխիղճ են, ճշտապահ, կատարողական, նպատակային: Օժտված պատանիները, հակառակը, ձգտում են բնական վարքին, ներդաշնակ հարաբերություններին բնության հետ, կարծես տրված են «կյանքի հոսքին»: Հաջորդ կարևոր անձնային մեծ գործոնն է *հուզական կայունությունը*, որը ներառում է անձի աֆեկտային կողմի բնութագրիչները: Արտահայտված հուզականությունը դրսևորվում է միջավայրից եկող ազդակների նկատմամբ բարձր զգայունակությամբ, հատկապես սթրեսային, դժվարին իրավիճակներին արձագանքելիս: Այդպիսի մարդիկ հակված են նաև տագնապի և դեպրեսիաների: Օժտված պատանիների մոտ արտահայտված են հուզականության/նեյրոտիզմի երեք բաղադրիչները՝ տագնապայնությունը, ինքնաքննադատությունը, հուզական անկայունությունը, ինչը կարող է ցածր սթրեսակայունության հիմք լինել: *Էքսպրեսիվություն և գործնականություն* բևեռականության մեջ վերջինս դրսևորվում է հարմարողական, իրատեսական, տրամաբանական, կատարողական վարքով և կայունությամբ, որը ծայրահեղ դեպքերում կարող է վերածվել կոնֆորմիզմի, ավտորիտարիզմի և դաժանության: Եթե արտահայտված է էքսպրեսիվությունը, ապա մարդն ավելի հակված է բավարարելու իր հետաքրքրությունները, քան համակարգված գործունեություն իրականացնելու, ընկալունակ է և բաց նոր փորձի նկատմամբ, ինչպես նաև իր ծայրահեղության մեջ դրսևորվում է անբարեխիղճ, անպատասխանատու վարքով [6]: Միջին ընդունակություններով պատանիները՝ ի տարբերություն օժտված պատանիների, զգայուն են և երազկոտ, որոնք էքսպրեսիվության անձնային մեծ գործոնի բաղադրիչներ են:

Ընդհանուր վերլուծությունից հետո կարևոր ենք համարում ներկայացնել օժտված պատանիների անձնային որակների գենդերային տարբերությունները՝ աղջիկների և տղաների մոտ դրանց արտահայտման աստիճանը:

Աղյուսակ 2-ում պատկերված են օժտված աղջիկների և տղաների անձնային գծերի միջին արդյունքները, ստանդարտ շեղման, F/F Sig. և նշանակալիության ցուցանիշները ստուգիչ խմբի աղջիկների և տղաների համեմատությամբ:

Ինչպես տեսնում ենք, էքստրավերտության մեջ մտնող տպավորությունների որոնում անձնային գիծը ստուգիչ խմբի աղջիկների մոտ է դրսևորվում (.013 նշանակալի տարբերությամբ) փորձարարական խմբի համեմատությամբ: Նույնը չենք կարող ասել օժտված տղաների և ստուգիչ խմբի տղաների մասին, որոնք չունեն էական տարբերություններ: Ստուգիչ խմբի աղջիկներն իրենց վարքում կոկիկ են (.041), բարձր է վերահսկումը (.011), ինքնավերահսկումը (.006) և հասկացումը (.009), ինչպես նաև երազկոտ են (.038) և տարբերվում են օժտված աղջիկներից իրենց զգայունակությամբ (.003): Հասկանալի է, որ թվարկված որակներն առավելապես գենդերային պայմանավորվածություն ունեն և չեն դրսևորվում օժտված տղաների մոտ՝ չնայած, որ վերևում բերված աղյուսակի համաձայն՝ այդ որակներով են նաև էականորեն տարբերվում ստուգիչ և փորձարարական խմբերը: Ստուգիչ խմբի աղջիկների մոտ վերահսկողության լոկուսը արտաքին է՝ վարքում իրենց վերհասկելու, գիտակցական, զգոն ու կոկիկ լինելու, դիմացիններին ավելի հասկացող դիրքից ընկալելու տեսանկյունից: Օժտված աղջիկների մոտ արտահայտված է նախատրամադրվածությունը նեյրոտիզմին (.001), որն արտահայտվում է հետևյալ անձնային գծերի դրսևորումներով՝ տագնապայնություն (.000), դեպրեսիվություն (.000), ինքնաքննադատություն (.020), հուզական անկայունություն (.001): Նեյրոտիզմի նախատրամադրվածություն (.038) ունեն նաև օժտված տղաները՝ ինքնաքննադատություն (.027), հուզական անկայունություն (.034) անձնային գծերի դրսևորմամբ:

Աղյուսակ 2. Անձնային գծերի գենդերային տարբերությունները փորձարարական և ստուգիչ խմբերում.

ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ	ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՍՏՈՒԳԻՉ ԽՄԲԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆ ԻՇՆԵՐ	ՍՏԱՆԴԱՐՏ ՇԵՂՈՒՄ	F	SIG	< P
ԱՂՋԻԿՆԵՐ						
1. ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ	8.57	11.67	3.589/3.199	.179	.675	.013
2. ՀԱՍԿԱՑՈՒՄ	7.64	10.33	3.028/2371	.409	.527	.009
3. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ	48.50	55.29	6.630/7.031	.000	.998	.006
4. ԿՈԿԻԿՈՒԹՅՈՒՆ	8.50	11.25	3.858/3.721	.114	.738	.041
5.ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ	8.64	11.50	3.411/2.284	3.525	.069	.011
6. ՆԵՅՐՈՏԻԶՄ	66.29	54.29	9.715/6.740	3.016	.091	.001

7.ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ	13.43	9.63	2.593/2.601	.041	.841	.000
8.ԴԵՊՐԵՍԻՎՈՒԹՅՈՒՆ	14.14	10.92	1.994/2.903	4.881	.034	.000
9.ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ	12.93	10.04	3.562/3.277	.292	.592	.020
10.ՀՈՒԶԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	14.21	11.63	1.847/2.281	2.852	.100	.001
11.ԵՐԱԶԿՈՏՈՒԹՅՈՒՆ	11.00	12.92	2.717/2.358	2.187	.148	.038
12.ԶԳԱՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ	10.50	13.29	2.565/2.312	.167	.685	.003
ՏՂԱՆԵՐ						
1.ՆԵՅՐՈՏԻԶՄ	56.48	49.27	9.605/7.850	.900	.350	.032
2.ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ	11.62	8.55	3.918/3.267	1.938	.174	.027
3.ՀՈՒԶԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	12.43	10.09	2.803/2.737	.000	.989	.034

Ինչպես տեսնում ենք, հուզական ոլորտի դժվարություններն առավելապես բնորոշ են օժտված աղջիկներին, քան՝ տղաներին, չնայած, որ վերջիններս ևս հակված են ինքնաքննադատության և հուզական անկայունության: Մենք կարծում ենք, որ նման արդյունքները կարող են բացատրվել օժտված աղջիկների հատկապես ներքին սահմանափակումների ու խոչընդոտների առկայությամբ: Միջին և ավագ դասարաններում հատկապես օժտված աղջիկների մոտ նկատվում է սեփական հնարավորությունները ցույց տալու վախ և իջնում է ինքնավստահությունը սեփական անձի նկատմամբ, նրանց մոտ խորանում է կասկածը սեփական ինտելեկտուալ կարողությունների վերաբերյալ և զգում են իրենց ավելի քիչ ընդունակ, քան իրականում կան: Ըստ Մյունխենյան լոնգիտյուդ հետազոտության՝ օժտված աղջիկները, կանայք, ի տարբերություն հակառակ սեռի, առանձնանում են տագնապայնությամբ և հուզական անկայունությամբ, ինչպես նաև տարիքի ընթացքում սեփական կարողությունների հանդեպ աճող անվստահությամբ: Օժտված մարդկանց հատուկ պերֆեկցիոնիզմը, ըստ մի շարք հետազոտությունների, հատկապես բնորոշ է օժտված աղջիկներին, իսկ հաճախ ոչ առողջ, դիսֆունկցիոնալ պերֆեկցիոնիզմը հիմք է հանդիսանում ծնողների քննադատության նկատմամբ ուժեղ արտահայտված անհանգստության: Աղջիկների մոտ անհաջողություններից վախը, փախուստը հանգեցնում է արտահայտված տագնապայնության, քանի որ ծնողների կողմից մեծ սպասելիքները վերածվում են ներքին ստանդարտների, որոնք առաջացնում են ուժեղ վախ սխալվելուց և սպասելիքները չարդարացնելուց [7,8,9,10,11]:

Այսպիսով, օժտված պատանիներն ունեն ընդգծված անձնային տարբերություններ միջին ընդունակություններով պատանիների համեմատությամբ և դրանք առավել ընդգրկուն են օժտված աղջիկների մոտ: Ուշադրության արժա-

նի են հատկապես հուզական ոլորտի դժվարությունները, քանի որ դրանք կարող են իրական խոչընդոտ հանդիսանալ միջանձնային հարաբերություններում, ուսումնական գործընթացում, սթրեսային իրավիճակները հաղթահարելիս: Այս արդյունքները օգտակար կլինեն օժտված պատանիների ծնողներին, կրթության հոգեբաններին՝ կանխարգելիչ աշխատանքների և հոգեբանական արդյունավետ միջամտություն իրականացնելու համար:

Գրականություն

1. **Առաքելյան Մ.,** Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա, Երևան, Փրինթինֆո, 2017.-160 էջ
2. **Кошелева М.А.,** Новые тесты IQ; Ростов н/Д: «Феникс, 2003. - 352с.
3. **Крайг Г., Бокум Д.**, Психология развития. — 9-е изд. — СПб.: Питер, 2005. — 940 с: ил. — Серия «Мастера психологии»
4. **Лукьянова М.И., Н.В. Калинина**; Психолого-педагогические показатели деятельности школы: Критерии и диагностика. М., ТЦ Сфера, 2004.-208с.
5. **Туник Е.Е.** Лучшие тесты на креативность. Диагностика творческого мышления, СПб.: Питер, 2013, 320
6. **Хромов А.Б.,** Пятифакторный оросник личности: Учебно-методическое пособие Курган: Изд-во Курганского гос. Университета, 2000. – 23с.
7. **Хеллер К.А., Перлет К. Сиервальд В.,** Лонгитюдное исследование одаренности//Вопросы психологии. -1991, N2 ст. 120-127
8. **Хеллер, К.А., Зиглер, А**. Различия между мальчиками и девочками в успеваемости по математике и есстественным наукам: может ли переориентация улучшить результаты одаренных школьниц//Иностранная психология. - 1999, N11, ст. 30-40
9. **Щебланова Е. И.** Неуспешные одаренные школьники/ -М., Обнинск: ИГ-СОЦИН, 2008, 212ст.
10. **Reis S. M**. Gifted females in elementary and secondary school//The social and emotional development of gifted children. What do we know? Washington: Plufrock Press, Inc., 2002, p81-91
11. **Silverman L. K. Perfectionism** // Maximizing potential: lengthening and strengthening our stride: Proceedings of the 11th World conference of gifted and talented children. - Hong Kong, 1997 – p 417-423

ЛИЧНОСТНЫЕ ОСОБЕННОСТИ ОДАРЕННОЙ МОЛОДЕЖИ

Аракелян М. А. (ЕГУ, Ереван, РА)

Григорян В. Г. (ЕГУ, Ереван, РА)

Число исследований относительно одаренности стремительно возросло в конце прошлого века, характеризуя одаренность в основном как когнитивную способность, высокий уровень интеллектуальных умений. Несмотря на многочисленные исследования, мало что известно о личностных качествах одаренных юношей, которые важны для раскрытия и реализации потенциала таких людей. Диагностировались более 500 старшеклассников, в ходе которых было выявлено 35 одаренных. Дальнейшие исследования показали значительную дифференциацию личностных качеств одаренных девочек и мальчиков, также трудности регулирования эмоциональной сферы.

Ключевые слова: *Одаренность, личностные черты, диспозиции, эмоциональная лабильность.*

PERSONAL CHARACTERISTICS OF GIFTED YOUNGSTERS

Arakelyan M. A. (YSU, Yerevan, RA)

Grigoryan V. H. (YSU, Yerevan, RA)

The number of studies on giftedness rapidly increased at the end of the last century, characterizing the giftedness mainly as a cognitive capability, high level of intellectual abilities. Despite of numerous studies, we know a little about the personal characteristics of gifted youngsters, which are important for revealing and realizing the potential of these people. More than 500 high school students were diagnosed, during which 35 gifted youngsters were identified. Further studies showed significant differences of the personal peculiarities of gifted youngsters and difficulties in regulating the emotional sphere.

Keywords: *Giftedness, personal traits, dispositions, emotional lability.*